

ԻՐԱՒՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Պոլիսիոյ համար Տարեկան 12 ֆր.
» Վեցամսեայ 6 ֆր.
Առաստաղակի համար (երկու քիւր մեկ ծախսով) Տարեկան 14, վեցամսեայ 7 ֆր.
ԿԱՆԽԻՎ ՎՃԱՐԵԼԻ

Նամակ դրամ եռայլն դրկել հետեւեալ հասցեով
ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ «ԻՐԱՒՈՒՆԿ» ԼՐԱԳՐՈՅ. — Վ.Ա.Ռ.Ն.Ա. (Պուլկարիա)
Редация на вѣстникъ
«И равункъ»
ВАРНА (България)

Rédaction du journal
„Ira vounk“
V A R N A (Bulgarie)

Խմբագրութեան ուղղեալ գրութիւնք
էս չեն դիմարեալ եւ յարմար դատուած-
ները միայն կը հրատարակուին աւ-
րոյցովի կամ մասամբ.
Դասուցման տողը 20 սանթիմ. երե-
ւոյն աւելի անգամներու համար 20 0/0
գնդ կը լինի:

ՏԵՂԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Տէր Մարտիրոս հօր տեղական
թերթերու միջոցաւ ժողովրդեան
հրաւեր կարգացած ըլլալուն հա-
կառակ կիրակի օր թաղ. խորհր-
դոյ ընտրութեան ձեռնարկելու հա-
մար ազգ. վարժարանի մէջ ոչ ոք
չընեաց, բացի մէկ քանի վար-
ժակներէ, որոնք ամսական ըս-
տանտու համար հոգաբարձունե-
րուն կը սպասէին. Մինչդեռ տե-
ղական թերթ մըն ալ իր շարաւթ
օրուն թիւով վաղը թաղ. խոր-
հրդոյ ընտրութիւն պիտի կատար-
ուի ըսած էր սխալմամբ, սխալ
մը որ ընտրական օրինաւոր գոր-
ծողութեանց մասին խմբագրին
բացարձակ տգիտութիւնը կապա-
ցուցանէր, քանի որ ընտրողական
ծողով չի կազմած, ընտրողաց եւ
ընտրելաց ցանկեր չի պատրաս-
տուած չէր կարելի յանկարծ ըն-
տրութիւն կատարել. բայց պր.
խմբագիրը իր այդ երկտող զըր-
ուածով ուրիշ բան մը լաւ սերտած
կերեալ, այն է կուոյ հանգոյց
մը մէջտեղ նետել, ըսելով թէ,
վառնա չը ծնուած հայերը թող չը
կարծեն թէ իրենք ընտրութեան ի-
րաւունքէ զուրկ են. Մենք ի հարկին
ասոր հակառակը չպիտի պնդենք.
բայց օրէնքին տուած պայմաններն
ալ մասնանի ընելէ չպիտի թերա-
նանք:

Երկու շաբաթ առաջ «Նշան-
օրհնութիւն» խորագրով մեր մէկ
խմբագրականին գրգռապատճառ
եղող Նիկողոս անուն գաւառացիի
մը վառնայի մէջ կատարած նը-
շանտուքը այսօր ըստ ամենայնի
լուրը ինչպէս է. որովհետեւ այդ
Նիկողոսի անունը Պոլիսէն, իսկ
իր ողջ կինը հայրենիքէն նամակ-
ներ դրկած են հոս իրենց հայրե-
նակիցներուն, թէ ամեն գնով ար-
դիւր ըլլան Նիկողոսի երկրորդ
անգամ ամուսնանալու ձեռնարկին,
եւ իրենք ալ արդէն Պատրիար-
քարանը գիմուս ըրած են, որ
խտու պիտի պատուիրէ բահա-
նանքուն զգուշանալ այդ տեսակ
խաբեանքի եւ համոզել Նիկո-

ղոսը որ Պոլիս վերադառնալ հայ-
րենիք երթալու ու իր ընտանիքը
պաշտպանելու համար:
Այս խաբեանքի իր նոր գործնչ-
ցուն հետ անցեալ օր մեր խմբ-
ագրատան գուռը ձեռք առած
էր, ու կը սպասուար մեզ դէմ դառ
բանալ եւ կրօնադիտութեամբ ա-
մուսնանալ. բայց մենք պաղար-
իւնութեամբ վանոնք վատահացու-
ցինք թէ այդ սպանալիքները
չեն կարող գործադրել եւ իրենց
ճիգը անօգուտ է:

Կ. Պոլսոյ թերթերը ձանձրոյթ
կը յայտնեն տեղւոյս կախակալեալ
Տ. Գէորգիին ներում շնորհուելու
համար Տ. Մարտիրոս հօր անընդ-
հատ կրօն. խորհրդոյ ըրած դիմում.
Ներում առնելու. «Սուրհանդակ»-ի
մէջ վառնայէ թղթակից մը կ'ը-
սէ թէ՝ Տ. Մարտիրոս հօր այս
աստիճան փութկոտութիւն ցոյց
տալը առանց հաշտոյ չէ. որովհե-
տեւ կը վախճայ թէ քանի մը
տարի առաջ իր կատարած կըրկ-
նամուսնութիւնն ալ մէջտեղ կը
հանեն, (իրեւել թէ մոռացուած
ըլլար) եւ թէ այժմ երէք Մ. երէ
բաղկացեալ թաղականութիւնը չը
կայ որ զինք պաշտպանէ եւսայն:

Նոյնպէս Պոլսոյ Սուրհանդակ
օրաթերթին վառնայէ գրուած
թղթակցութիւն մը գայթակղելի
դէպքի մը մասին ակնարկութիւն.
Ներ կ'ընէ. թէ եւ որոշ անուններ
չի տար, բայց աղօտ կերպով
դէպքին ծանրութիւնը մէկ քանի
ազգային պաշտօնեաներու ուսին
կը բեռնէ. բարեբախտաբար
այս անգամ ակնարկութիւնները
վարժապետի ու քահանայի վրայ
չեն ծանրանար:

Այս թղթակցին հիմէ գիտ-
ցածը որոշ բան մըն էր, նախ
տեղական թերթերու մէջ բողոք
բառնալու էր փոխանակ հեռու-
ները երթալու:

ԱՊԱՆՈՎՈՒԹԻՒՆՆ ԻԹՈՒՐԲԻԱ

ՄԱՍՆԱՒՈՐ ՆԱՄԱԿՄԵ

Պարտիզակ, 1 սեպտ.

Սիրելի գաւազն,
Շատ մանրամասնու-
թեանց մէջ մտնել չեմ ուզեր, զի
այրած սրտիս ցաւերը պիտի նո-
րոգին. ասչափ ըսեմ որ, ապահո-
վութիւն ըսուած բանը մեզի հա-
մար չէ. միսօնարներն անգամ
չատ ատեն նեղութիւն կը կրեն

օտար հպատակ ըլլալով հանդերձ.
վարի աղբիւրը, որ գիւղի դրօսա-
վայրն էր, այսօր գէշութիւններու
բոյն եղեր է. մէկը չկրնար եր-
թալ միս մինակ. Երբեմն ինչի-
միտ կերթանք կուգանք գործով,
Աստուած գիտէ թէ ինչ ահ ու
դողերով, այնպէս որ ողջ առողջ
վերադարձնիս հրաշք կը սեպենք:

Ինչիմիտ, որ միաբնակարարներ
է, չես կրնար մտքէդ անցնել թէ
ի՞նչպէս այնքան գէշութիւններ
կ'ըլլան. մարդուս մագիքը փուշ
փուշ կ'ըլլան, թէ որ Արսլանպէկ,
Ինչիմիտ, Ատաբազար, Սպան-
ճա եւ Կէյվէ եղած գողութիւննե-
րը, մարդասպանութիւնները, ա-
ռեւանգութիւնները, տեսակ տեսակ
չարչարանքները մէկիկ մէկիկ գը-
րեմ. եւ ո՞րը գրեմ ու ո՞րը թո-
ղում. անցեալ օր ըսուեցաւ որ
Կէյվէի մալ միւտիւրը 10,000 ֆր.
գողցած է գանձէն, որպէս թէ
քննիչներ գացին իզմիտէն, պիտի
դատէին ու պատժէին, բնաւ բան
մը չըրին, վա՛յ եկեր էր թէ որ
ընողը հայ ըլլար:

Եւրոպացիներ կուգան կերթան
կը տեսնեն ու շատ բաներ կ'իմա-
նան. «մեզի ի՞նչ, կըսեն — քանի
որ մեզի գէշութիւն չ'ըլլար». թէ
եւ անոնց ալ կընեն տաճիկները.
չուն ըլլայ չ'հալէ ու չ'խածնէ. ե-
ղած բան է:

Զորեկները ահագողի մէջ, ի-
րկուները տուններն քաշուած
նորէն ահագողի մէջ, կը պառ-
կինք ահագողով, չգիտնալով թէ
առաւօտեան արեւ պիտի տեսնենք
արդեօք. կը կարծէինք թէ, եր-
կաթուղին որ շինուի, եւրոպացի-
ներ որ երթան գտն, քիչ շատ
փոփոխութիւն կ'ըլլայ. բայց խա-
բուած ենք: Սպանճայի եւ Ատա-
բազարի այգիներն ու լեռները
լեզու ելնէին ու խօսէին եւ աշ-
խարհ ալ լսէր թէ ի՞նչեր կ'ըլլան
այս կողմեր: Ա՛խ գաւազն, Պոլիս
որ ըրին այս շունք Եւրոպայի տէ-
րութիւններուն աչքին առջեւ ու
չը քաշուեցան, այս կողմեր չպի-
տի ընեն, ա՛լ հասկցիր դուն քեզ-
մէն. Եթէ միւթարանք մը ունիմ
ան է, որ դու հոս չես. գաւազն,
թէ չէ մինչեւ հիմայ կաշիդ հա-
նած էին. երանի անոնց, որ դըր-

սերը կը գտնուին ու մարդու պէս
կապին, իրեն «չըթ» ըսող չկայ.
Հոս շունքը մեզնէ շատ յարգի
են. հա՛յ ես, գործ ունի՛ս, ստակ
ունի՛ս, աղուոր աղջիկ հարս կամ
կնի՛կ ունիս, խերը տեսնաս, քու
կըք չեն:

Աստուած ինք ողորմի ամենուս
եւ շուտով վերջ տայ, թէ չէ քա-
շիլիք բան չէ. հոգիսն ա՛լ բե-
րանիս եկած է. հայրդ
Օ.

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԵԾԱԳՈՅՆ ԱՂԵՏԸ

(Շարունակութիւն 69 քիւռե)

Խաղարանը երկու գլխաւոր մա-
ռի կը բաժնուի. մէկը՝ արտաքին
սրահը, որ ձիւնու, պտղաւորու
կամ հանգիստ առնելու սահման
ուած է, ու միւսը ներքին սրահը,
որ բուն խաղերու սրահն է:

Ասոնց կահ կարասիներու ճո-
խութեանը, արդուզարդի մասին
ցոյց տրուած հոգածութեանը նը-
կատմամբ բան մը ըսել չեմ ուզեր
որովհետեւ տեսնելով միայն կարե-
լի է գաղափար կազմել հոն տիրող
ճաշակի բարձրութեան վրայ: Չը
կայ բան մը, որ աւելի ըլլայ, չը
կայ մանաւանդ բան մը, որ պա-
կաս ըլլայ. Ըստ իս «Հազար եւ մէկ
գիշերներ»-ու մեծանուն հեղինակը՝
Մօնթէ Գաուլօի խաղարանը տես-
նելով միայն յաջողած է նկարագ-
րել Ալատինի պալատը, սա տար-
բերութեամբ միայն, որ հոն տաս-
նէ պակաս յաւերժահարսեր գո-
յութիւն ունէին, մինչդեռ հոս հա-
ղարներով կը վիստան ու իրենց
միջակայրը իսկապէս կընեն Սուլ-
թանական պալատէ մը շատ աւե-
լի հաճոյալի ու զուարթ:

Բուն խաղերու սրահին մէջ ի-
րարմէ բաւական հեռի դրուած են
խաղի սեղանները. իւրաքանչիւր
սեղանի վրայ առնուազն ութսու-
նէն հարիւր մարդիկ կը խաղան
ու երբ մտածենք թէ սէզօնին
տաք ժամանակները տասն եւ վեցէ
աւելի Ռուսիոյ եւ ուրիշ աւելի
քանք ե քառասնի սեղաններ կը
դրուին, կրնանք որոշ գաղափար
մը կազմել խաղացողներու թուոյն

և խաղաբանի մեծութեանը վրայ : Այս հաղաբանոր խաղացողներու մէջ տիրող ձայնը պէտք է ըլլայ միմիայն դեղնորակ լուիններու ճշն- կըլթոցը և պանքնթներու խշր- տոցը, որոնք ձեռքէ ձեռք կանց- նին, շատ քիչ անգամ խաղացող- ներուն և յաճախ անգամ պանքի պաշտօնէից գոհունակութիւն պատ- ճառելով : Ուրիշ կարգ մը պայ- մաններու հետ շշուկ չը հանել ու կամաց խօսիլը կարեւոր պայման- ներէն մէկն է : Բայց ո՞վ չը գի- տեր թէ ամեն կանոն իր բացա- ութիւնը ունի : Բռնա տը կալի խաղաժողովը և Պ. Ռոշիլտի քահանայը, որոնք երբեմն խաղա- բանի կամարը կը թնդացնեն, զը- ւարթ երգերու պէս մտիկ կ'ըլլուն թէ նոյն իսկ կարգ ու կանոնի հսկող պաշտօնէից և թէ հասա- րակութեան կողմէն . . . վասնզի Բռնա տը կալ ու Ռոշիլտ այնպի- սի անուններ են, որոց առջեւ ա- մեն նկատում մէկդի կը թողուի, թէեւ խաղի սրահին մէջ պէտք է իր կանոնին համեմատ ամեն տիտ- ղոս դէպքի գոյութիւն ունենալէ ու հաւասարութեան սկզբունքը պաշտօնի իր ծայրագոյն աստիճա- նին մէջ : «Պարոն, Տիկին» . ա- սոնք են ածականներու բանաձեւը՝ ինչպէս Մարգարին, նոյնպէս և Ֆրանց Ժօզէֆ կայսեր համար, ինչպէս Տիկին Արուսին, նոյնպէս և Անգլիոյ վեհափառ թագուհին համար :

96ի վերջերք՝ բարեկամներէս մէկը այսպէս կը գրէր ինձի «Այս, ալ չը պիտի ըսեմ, որ թագակիր անձնաւորութեան մը հետ չեմ տեսակցած կենացս մէջ : Փորձու- գալի թագուհին այսօր սեղանին վրայ քովէքով եղած ատենիս հա-

ճեցաւ ինձի հարցունել թէ ինչ- պէս կերթայ բաղդս . ու երբ ես «վեհափառ» ածականը տալով, կուզէի պատասխանել իրեն, «հոս փորթուգալի թագուհին չ'է, որ կը խօսի ձեզի հետ, այլ պարզ կին մը, ուստի ըստ այնմ տուէք իմ տիտղոսը» ըսաւ ու համառօ- տակի բացատրեց խաղաբանին կա- նոնը ու յետոյ երբ Արեւելքցի ու հայ ըլլալս իմացաւ, Ֆրեմուտի մէջ մտադիր լսեց ինձմէ հայերու ջարդի պատմութիւնը, լալու չափ յուզուելով, Աստուծոյ օգնութիւ- նը հայցեց մեր ժողովուրդին հա- մար : Է՛, ի՞նչ կըսես՝ բարեկամ, կրնա՞ս ուրիշ տեղ երեւակայել այս հաւասարութիւնը» . . .

(Շարունակելի)

ԹԵՂԵԱՎՅՈՒԹԻՒՆՆԵՐ

Աղեքսանդրիա, 2/24 սեպ. 99
Անցեալ կիրակի, 5/17 սեպտեմ. խիստ ցաւալի դէպքեր պատահե- ցան Պահիրէի Հայոց եկեղեցին Օրմանեանի յիշատակութեան խնդ- րոյն համար : Առաջ փոխ-տեղա- պահ Տ. Մամբրէն գաղտնի ոստի- կաններ բերել տուած և սպառնա- կան յայտարարութիւն մը փակ- ցուցած էր եկեղեցիին դուռը : Ժանուցող թէ «չը յիշուի» պողա- ցողները պիտի ձերբակալուին : Հակառակ այն սպառնալիքին՝ ե- կեղեցիին մէջ «չը յիշուի» պողա- ցին քանիններ . եկեղեցիին աւար- տումէն յետոյ, ժողովուրդը պա- տին վրայ փակցուած սպառնական յայտարարութիւնը բզկտեց և զա- նազան խմբակներու մէջ տաք վի- ճաբոնութիւններ սկսան . գաղտ- նի ոստիկանութիւնը ուզեց միջա- մտել և վէճի առիթ տուաւ այս

ու այն կողմ : Լրտեսները խնդ- րոյն ծանուցութիւնը զգալով ուզե- ցին դրսէն ոստիկան բերել տալ եկեղեցին, բայց ժողովուրդը տա- ճարին դռները փակելը խոհեմու- թիւն համարեց որով ոստիկանաց մուտքը արգելուեցաւ : Տ. Մամբ- րէն երդում պատառ ըրաւ որ ձեր- բակալութիւն տեղի չը պիտի ու- նենայ ու դռները բացուեցան և ժողովուրդը դուրս ելաւ : Բայց նոյն երեկոյին, գիշերուան ժամը 9ին միջոցները Տ. Մամբրէն «եր- դումը ծալեց տոպրակը գրաւ» և հրամայեց որ եկեղեցիին շրջակայ խանութներէն ու սրճարաններէն ձերբակալութիւններ կատարուին, ու մօտաւորապէս յիսուն անձեր ձերբակալուեցան : Ձերբակալուող- ներէն շատերը դրսէ դուրս մար- դիկ էին որոնք մօտէն կամ հե- ոուէն չէին հետաքրքրուել յիշա- տակութեան խնդրով : Ասոնց ըն- տանիքի անդամները և բարեկամ- ները գիշերանց Առաջնորդարանի դուռը ափ առին և ողորմելի տէր- տէրէն բացատրութիւն պահանջե- ցին այս տիտղոս եղելութեանց մա- սին : Տ. Մամբրէն շուարած ստի- պուեցաւ ոստիկանատուն երթալ և խնդրիլ որ ձերբակալեալք ա- ղատ արձակուին . ոստիկանապետը արհամարանօք մերժեց Տ. Մամբ- րէին զօնւած խնդրքը որ ժամ մը առաջ ձերբակալման պաշտօնագի- րը մօտրաւէր (իր բառով), բայց հետեւեալ օրը ամենքն ալ աղատ արձակեց առանց հարցաքննու- թեան :

Հիմայ խնդիր է գիտնալ թէ ո՞վ է այս արտառուց արարքնե- րուն իսկական հեղինակը : Տ. Մամբրէն խրտուիլակ մը, անարգ

գործիք մը, մարդամեքենայ մըն է որուն պաշէն բռնած ուզած կող- մերնին կը դարձնեն . ո՞վ է դարձ- նողը, ո՞վ է այդ մեքենան շար- ժողը :

Բաշաները, թէեւ միապետա- կան մարդիկ, բայց քանի ամիսէ ի վեր Եւրոպա կը գտնուին օդա- փոխութեան համար և հետեւաբար անոնց մեղքը չենք կրնար առնել, մանաւանդ թէ, որքան ալ միա- պետական՝ զօւլանին խելք ունին և այս տեսակ ապուշ ու եղբական գործեր չեն կրնար ընել, ինչպէս որ փորձը ցոյց տուին իզմիրլեան Սրբազանի առաջնորդական ընտ- րութեան գործին մէջ, հետեւելով «Ձայն բաղմաց»ի սկզբունքին՝ Գանք Քաղաք. ժողովին : Սոյն ժողովի անդամներն են

Զեներ պէյ Մէրհամէթ ճեան Բարթիկ էֆ. Նահապետեան Արթին պէյ Ստեփան Մովսէս էֆ. Անանեանց Արմենակ էֆ. Պէյլէրեան Զեներ պէյ Մէրհամէթ ճեան և Բարթիկ էֆ. Նահապետեան Ե. Գիպտոսէն բացակայ են այս պա- հուս : Արթին պէյ Ստեփան և Մովսէս էֆ. Անանեանց բանի շա- բաթէ ի վեր Աղեքսանդրիա կը գտնուին, այնպէս որ իրականին մէջ Քաղ. ժողովը առժամապէս դադրած է գոյութիւն ունենալէ կամ թէ ամառնային արձակուրդ կընէ : Մինակ անգամ որ Գա- հիրէ կը գտնուի՝ Արմենակ էֆ. Պէյլէրեանն է որ անկարող է իր վրայ այդպիսի ծանր պատասխա- նատուութիւն ստանձնելու, մե- նաւանդ որ զինքը մօտէն ճանլը- ցողները չեն կրնար իրեն վերադ- րել այս կարգի ոճրագործ արարք- ներ : Ուրեմն Քաղ. ժողովը չէ

ԲՈՆՈՒԹԵԱՆ ՏԱԿ (45)

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՅՑ ԿԵԱՆՔԷ ՊԱՏԿԵՐ ՄԸ

— . 0 . —

ՄԱՍՆ Բ.

Այսպէս կը մտածէր երբեմնի դրա- մափոխը անոր իր մօտ աշխատած ա- տենի անմոռանալի երանութեան օրե- րը յիշելով, օրեր, որ հիմայ իրենց այ- լազան յիշատակներով իր սիրտը կը զալարէին. օրեր, որ ընտանեկան ա- մեն տեսակ քաղցրութիւն կը վայելէր առաքինի կնոջ եւ իր աննման Հրա- նոյշի գգուանքներուն շնորհիւ ուր ան- կեղծութիւնը սկիւղայտնի կը փայլէր :

Յովհաննէս աղան Վահրամի դասա- խօսած վարժարաններէ միոյն հասցե- ով զոց՝ Վահրամին նամակ մը գրեց, եւ քիչ ատեն ետքը անկից պատաս- խան առաւ. միայն թէ՝ Յովհաննէս ա- ղան Վահրամի պատասխանէն ետք իր նամակները ուղղակի Վահրամի հաս- ցէին չըրկեց. այլ մեր ուսուցիչ երի- տասարդին հրահանգով տարբեր միջո- ցով մը խոհեմութեան համար :

Տարի ու կէս առաջ տէր եւ ստորա- դասալի թղթակցական յարաբերու- թիւններու մէջ փչող մտերմական կեն- ղանի շուրջը, միեւնոյն հարուածէն զարնուած ըլլալին մասնաւորաբար Ակնի մասին փոխանակուած կարծիք-

ները սիրոյ փոխադարձ անքակտելի կապեր հաստատեցին իրարու մէջ, գա- ղափարնելու նոյնութիւնը ամբողջ գգալի եւ ծաւալեցնող էր որ շաբաթ չէր անցներ որ անոնք իրարու չգրէ- ին :

ԺԱ.

1890-1894 հայկական յեղափոխու- թիւնը մեծ ճգնաժամեր անցուց, ինչ- պէս մեր Թ. Վրիտուն մէջ ըսինք հակ- ազդեցական ճգնաժամ :

Մանաւանդ 90-94 ճգնադ չորս տա- րիին մէջ ամենէն զգուշիկ երեւոյթնե- րու հանդիսատես եղանք :

Գասալիքներու խմբակներ ալ ու ձախ կը վխտային Պոլիս եւ նոյն իսկ անկից դուրս, ազատ Եւրոպայի մէջ. կարգ մը նորահասներ ալ բոլորովին անհաշիւ ուղղութեամբ առանց գործ մը տեսնալու ազգային յեղափոխու- թիւնը կրկին շատ յայտը պայմանե- րու մէջ ցուցնելու ջանքերով մտքերը յուզել եւ հետաքրքրել կը կարծէին :

Այս պայմաններու մէջ, խելագար յեղափոխականներու քարսիրտ ուղղու- թեամբ առաջ եկան խաչագողներ, դա- ւաճաններ եւ ճշմարիտ աղմուկ անձն- ուրուցներ, այս վերջինները իրենց ը- րած չունգալից խոստումներէն չլացած եթէ օգտակար ալ եղան նիւթական անտանելի անձկութեան մէջ տառապե- լով նահապետական միջոցներով եւ զէնքերով կոտորեցին իրենց ծաւալի-

չի եւ ոգեւորչի դերը. կրակոտ սոսո- կութեամբ մը, որոց նկարագիրը պի- տի փութեամբ ընել քիչ ետքը :

Ուշագողներ, որոնք յեղափոխու- թիւնը շահագործեցին, բաւական ըս- տուար թիւ մը կը կազմէին. ասոնք չըլած զրոյցներու համեմատ յայտած էին յեղափոխականներէ վկայագիրներ ստանալ եւ ատոնց շնորհիւ Թուրքիոյ մէջ կամ Թուրքիայէն դուրս սպրդիլ ամեն ժողովրդական խաւերու մէջ կըր կին խռովի նպատակաւ, առաջին փա- ռաբանել իրենց պատկանած կուսակ- ցութիւն եւ անոր ներկայացուցիչը, երկրորդ նիւթական օժանդակութիւն գտնել :

Յեղափոխական խաչագողները իրենց նպատակին հասնելու համար ամեն ցած միջոցի դիմեցին. անոնք զարդացու- մներու, կեանքի եւ ազգային զգացումի փորձառութիւն եւ տաքութիւն ունե- ցողներու հետ զոռուշացան շատ կապ եւ յարաբերութիւն ունենալէ. ի՞նչ որ իրենց պէտք էր ոչխարներ էին եւ ցաւալի է նկատել որ իրենց սուր հո- տառութեամբ եւ հեշտութեամբ որոշե- ցին զիւրահաւան ոչխարամիտները, որոնցմէ անդրողուելի կոյր հետեւող յամառներ դուրս բերին էն զգուշիկ մի- ջոցներ ի գործ դնելով :

Մեր ազգային կեանքի այդ չըմանին մէջ ծնունդ առնող այդ խաչագողները բնականաբար իրենց դէմ արգելքներ

պիտի գտնային, ազդի ցաւերուն, մա- չեցնող վիշտերուն ճշմարիտ գիտակ- ցութիւնը ունեցող հայրենասէրները, զորս հարկ էր լուսթեան դատապար- տել, իրենց ձեռնարկը յայտնաբերելու եւ կաթնտու կովերին, իբրեւ թէ իրենց դաղափարակիցները ուզածնուն պէս գործածելու, անոնց նիւթական օժան- դակութեամբ իրենց երեւակայած իշ- խանական կենցաղը վարելու համար :

Ուշագողներ էին մեր քիչ վերը ակ- նարկած ճշմարիտ գիտակից հայերը, եւ խաչագողները որ ազգային զգացում ըսելով սոոր կեղծիք կը հասկնային եւ չարութեան ու վատութեան ամեն ըն- դունակութիւն ունէին շատ վարպետ- որդի կիրպով յաջողեցան սանձ դնել անոնց բերնին եւ պարտաւորեցնել զա- նոնք որ կարծիք տալու առնելու մէջ զգուշանան : Ուշագողները իրենց հե- ոուէին սաւաթօտութիւնը, բանբասան- յը եւ ի վերջոյ նոյնանման սկզբունք- ներով վարուող օռականներ որոնց գոր- ծը սզգալին պատշաճ քաղաքականու- թեան մը արձագանդ ըլլալէ աւելի արժանիքներ նսեմացնել, իրենց ուղ- ղութեան չհամակրող անձեր հալածելու ազգին մէջ երկպառակութեան մտա- ցուցիչ որով սփռել էր :

Շ. Կումսարական

(Շարունակելի)

մարդամեքենային շարժելը :

Ուրիշ մենծ աղայ մը ունինք , Գրիգոր Քանջէլէր , որմէ այս տե- սակ բաներ կրնան սպասուիլ , բայց անիկայ ալ հիմայ Եւրոպա կը գտնուի :

Ամեն մարդ կը խօսի Կարա- պետ պէյ Շէրիտեանի մասին իբրեւ ներշնչող Տ. Մամբրէի ըն- թացքին . այս անձը արտաքին գործոց ղեւանատան պարուծա- ներու պահապանակետն է և Գա- լաթ . Կրեմլի . Ժողովին ալ ա- տենապետը , Թէեւ իր պաշտօնէն ղուրս է Գաղ . Ժողովի վերաբեր- եալ գործերուն միջամտել՝ բայց այս երկրին մէջ կարգ կանոն , ի- բաւարարութեան սահման եւն , հար- ցընող փնտռող չ'կայ : Կը նայիք որ օրին մէկը Շէրիտեան պէյին խելքին կը փչէ Գաղ . Ժող- վին նախագահել և ժողովը «վա- րել» — ժողովին անդամները ձայն չեն կրնար հանել , «գէշ մարդ չըլլալու համար» : Շէրիտեան պէյ Օրմանեանի ջիւղմ համակողմն է և անոր հակառակորդներուն դէմ ատելութեամբ ու զայրոյթով լեցուած է : Եւ որովհետեւ հիմայ Գահիրէի միակ ազգեցիկ անձը ինքն է մինչեւ հոկտեմբերի վերջը՝ ատոր համար ամեն մարդ կը հա- լատայ որ Տ. Մամբրէին պոչը դարձնողն ալ ինքն ըլլայ :

Ի՞նչ Շէրիտեան պէյ այս տը- խտր շահատակութիւններուն հե- ղինկը հռչակուիլը իրեն պատիւ չ'սկսեց , ինչ որ քիչ մը տարա- կուելի է , այն ատեն կրնայ հը- րապարակաւ հերքել իր շուրջը դարձող տարածայնութիւնները :

Եգիպտացի

Պուրկազ, 17 սեպ.

ԱՆՔԱՆՈՒՆԵՐԸ ԵՎ ՄԱՐԿԵՏՈՒՆԸ

Տեղւոյս դաստառն Արմեն Շիւտան իր շատ մը թերութեանց հետ միա- ցուցած է նաեւ աննկարագրելի շահա- մուրթեան մը յատկանիշը : Թատու- ներէ , հանգէսներէ և հանդանսկու- թիւներէ իր տասանորդը առնելէ չը զոհանալով կըսկի ազգատ տղաքնե- րու ի հաշիւ փոքրիկ հանդանակութիւն ներ ընել , քաղաքիս կրթատէր ազգա- յիւններէն , անոնց զարդակաւ պիտոյք- ները հոգալու համար , բայց փոխանայ նպատակին գործածելու , իր կողորդը կ'անցնէ ու փառաւորապէս անոյշ կը ընէ , առանց խղճահարուելու :

Իր շահատակութեանց թուումն մա- տնցը ուրիշ առթի մը վերապահելով , ներկայիս կը փութամ մէկ գէպք մի- այն հրապարակել : Պ. դաստառն՝ օր մը տխուր դէմքով ներկայանալով Պ. Ե. ին , կը նկարագրէ Յ. Սախարեան անուն տղային խղճալի վիճակը և պէտք եղած գրքերը առնելու համար անկէ 27 դրշ . առնելով կը մեկնի : Ժա- մանակ կանցնի և օր մը Պ. Խ. Սախ- արեանը շուկան տեսնելով կը փափա- քի անոր ուսումնական վիճակը իմա- նալ և հարցումներ կուղղէ . աղան կը տատանի և իր դասերը լաւ չ'գիտնա- լուն պատճառ կը բերէ պէտք եղած յատկաբեր չունենալը : Պ. Խ. բոլո- րովին զարմացած և հաւատարմով տը- ղային ըսածներուն տուն կը գիմէ և 3 այլին մօրմէն բացատրութիւն կը

խնդրէ . մայրը , ո'չ միայն կը հաստա- տէ տղային ըսածը , այլ կը յայտնէ նա և թէ դաստառնին տունած միմիայն 1 գրքին արժէքը վճարելու համար , կը ստիպուի անոր ճերմակեղէնները լու- անալ և այդ կերպով ազատիլ այդ պարոնին ձեռքէն :

Խնդիրը այժմ թաղական խորհրդա- րանն է . հետաքրքիր եւք իմանալ թէ ինչ տնօրինութիւն ըրած է , կամ ը- նելու վրայ է պատ . Խորհուրդը :

Չարմանալի է որ ուսուցչութեան ասպարէզին արատ բերալ այսպիսի ա- րարած մը դեռ պաշտօնի վրայ կը դըտ- նուի իր մի քանի համախոհներուն շնորհիւ : Մենք կը փութանք շնորհա- ւորել Պուրկազիները և իրենց տի- պար վարժարանն ու վարժապետը :

Յաջողութիւն և կարողութիւն դէ- պի

ՏՈՍԹԵՑԻ

ՊՈՒԼԿԱՐ ՈՒՍՈՒՑԻՉԸ

Իրաւունքի անցեալ թիւին մէջ Պուլ- կար դաստառնի մասին Աստղիկի կող- մէ արուած տեղեկութիւնները որքան ալ գոհացուցիչ ըլլային , նոյնքան իրա կանութենէ հեռի ըլլալ կը թուէին . հետեւաբար Պատ . Թագաբաճութեան տունած այս տեղեկաւ թիւնները եթէ ոչ սուտ գէթ սխալ են :

Պարզեմք խնդիրը . նախ՝ կըսուի թէ Պուլկար դաստառնին նկատմամբ ունէ գիտողութիւն չէր եղած հոգաբարձու- թեան : Կամ արձանագրութեանց ցան- կին մէջ բան մը չէր նշանակուած : Ա- սիկայ որքա՛ն սխալ է : Մենք մօտէն գիտենք որ նախկին տնօրինութիւնը իր առաջնակարգ ու ամենամեծ պար- տականութիւններէն մին սեպած էր , պուլկար լեզուի դաստառնի փոփոխու- թիւն մը կատարել անմիջապէս , եթէ ինք վերստին պաշտօնի կոչուէր : Մենք հաւասարապէս գիտենք նաեւ որ՝ նոյն տնօրէնութիւնը ամեն բանէ առաջ Հո- գաբարձութեան զգացուցած էր այդ փոփոխութեան անհրաժեշտութիւնը : Ուրեմն անգամ մը խոստովանինք որ նախորդ տնօրէնը բոլորովին անմեղ էր այս խնդրոյն մէջ : Պահ մը ետեւա- դրենք որ իրօք ինք լուռ մնացած էր այս մասին : Սակայն չէ՞ որ Իրաւունք լրագրոյ մէջ քանիցս գրուեցաւ այս կէտին վրայ . սխալ կամ անիրաւ էին այդ գրուածները :

Երկրորդ , կըսուի թէ վերոյիշեալ ի- բաւար հոգաբարձութիւնը յարժար դատեց այս անգամ եւս վարձել նոյն պաշտօնեայն , անոր հետ աւերող տարի մը կապուելու պայմանաւ . կը հարցը- նենք . ինչպէս կրնայ կապուած ըլլալ երբ գիտենք թէ՛ Աստղիկի նման դեռ մի քանի հայ ուսուցիչներ ներկայա- նալէ վերջն էր որ՝ Հոգաբարձութիւնը հարկ տնհրաժեշտ համարեց այս խնդ- րոյն նկատմամբ խորհրդակցութիւններ ընել , որոշելու համար թէ՛ նախկին դաստառն կրնա՞ր վար զնել՝ թէ ոչ . եթէ կրնար , ինչ կերպով :

Ուստի ես իմ մասին , գործին այն- քան մօտէն գիտակից ըլլալով , երբէք չեմ կարող Աստղիկի նման ընդունիլ որ՝ եղածը եղած է , ա'լ ուրիշ դար- ման մը մտածել պէտք է մեր ցաւին : Ո'չ , ես միայն կըսեմ . մեր պաշտօնա- կան մարմինն է որ գործեց մեղքը , հիմայ ալ տարի մը թող մեր մանկտին քաւէ ատիկայ :

Ըսել է որ այս ծանօթութիւններու տեղեկ մէկը , որքան ալ ազգային ե- ռանդ ունենայ իր ներսը , դարձեալ չը պիտի հաւանի ձրիաբար դասախօսել մեր վարժարաններու մէջ , (ինչպէս Աստղիկ ալ իր վրայէն նետած կերե-

ւէր ձրի դասախօսութիւնը) գիտնալով որ մենք գիտակցաբար կու գնեք մեր գրամը ծովը նետել :

Չ'մոռնամ ըսելու որ՝ այդ Պուլկար դաստառնն բարձր կարգերու ալ չի կրնար յարմար գալ , քանի որ վարի կարգերու համար յատկացեալ օրինա- լոր մէկ դաստառ մը մէկ երկու տար- ուան մէջ չէ կարող աշակերտը դնել այն վիճակին մէջ , որ նա կարողանայ յաջորդ տարին անմիջապէս ըմբռնել դաստառնին ճառածը . երկրորդ , աշա- կերտը ճիշդ այդ բարձր տարիքին մէջն է որ ամենէն աւելի պիտի կրնայ օգ- տուիլ իր լեզուին տեղեկ ուսուցչէ մը :

Ասոնց ամենը մանրամասնօրէն նը- կարագրելէ վերջ , ալ ընթերցողին կը թողու՞մ փնտռել գիտնալ այն թագուն պատճառը որ հիմքը բռնած էր այս խնդրոյն և որ կը բռնէ դեռ խել մը նմանօրինակ դատերու մէջ . . .

Յէլէկեմէն

Սեպտ. 20/2 99

„ՇԱՐԺՈՒՄ"Ի ԽՄԲԱԳՐԱԹԵԱՆ

— 0 —

Ազգ . վարժարանի Հագաբար- ձութեան մէկ անգամին հարցու- մին կրկին անորոշ պատասխան մը տուիք առանց քիչ մը աւելի բա- ցատրութիւն տալու թէ «անորա- կելի» վարժապետը ո'վ է կամ ո- լոնք են : Մինչդեռ իբրեւ հրապա- րակագիր պարտաւոր էիք՝ եթէ կար իրապէս այդ տեսակ մէկը , առանց ծածկուելու հրապարակել , քանի որ խնդիրը հանրութեան օգտին շուրջ կը դառնայ :

Ինչ հարկ կայ ականջէ ականջ փսփալ , մամիկներու հանելուկ զրուցելուն պէս : Վստա՛հ եղէք որ վարժապետներէ և ոչ մին չի զի- ջանիւր ձեր ոտքը գալ բացատրու- թիւն ուղեւու համար , որոյհետեւ անոնք հանրութեան պաշտօնեայ են , հետեւաբար իրենց թերութիւնն ու առաւելութիւնը հանրութեան դա- տաստանի առջեւ հակատաքաց կը ուղեն լսել : Արդ եթէ ձեր ը- սածինվրայ վստահ էք , քաջութիւն ունեցէք արդարաւ , յականէ յանու- անէ հրապարակել փաստերով : Եթէ այս քաջութիւնը չէք ունենար և կամ եթէ պառաւ բամբասաղի մը յա տուկ ձեր ստանձնած դերէն չէք հը րաժարիր , ուրեմն հաճեցէք ձեր ճակատին վրայ կրել «անորակելի» բառին հետ խուժը մը նոյն ի- մաստ մակդիրներ :

ԴԱՍԱՏՈՒ ՄԸ

ԼՐԱՔԱՂ

— 1 —

Պարսկաստանէ մեր թղթակիցը կ'իմացնէ թէ օգոստոս 27ին Ղա- զուին քաղաքին մէջ պարսիկները հայ վաճառատուներ կողոպտած և քրիստոնէից դէմ ահաբեկիչ ցոյ- ցեր ըրած են . բայց հետեւանքը հայոց նպատաւոր եղած է : Նա- մակը շատ հետաքրքրական է . տեղւոյ անձկութեան պատճառաւ ստիպուեցանք յառաջիկայ թիւին ձգել անոր հրատարակութիւնը :

— Եֆէնիճէ Գալէի վեց գիւղե- լու ազգայինները ասկէ առաջ

լատին եկեղեցականներէ նպաստ ընդունելով դաւանափոխ եղած է- ին : Այս անգամ ծանուցուած է Պատրիարքարան թէ 18 ընտանիք վերագործած են մայրենի Եկե- ղիցւոյ գիրկը և թէ ատոնց մէջ նպաստի կարօտ խեղճ անձեր կան : Պատրիարքարանէն պիտի յանձ- նարարուի Մարաշի տեղապահ Տ. Յովհաննէս քահանային որպէսզի օգնէ այդ կարօտեալներուն :

— Գահիրէի ազգային արտե- լուն տարեկան զուտ հասոյթը 2600 ոսկիի գումարի մը յանգե- ր է այս տարի : Տեղւոյն ազգային սնտուկը տարեկան 1000 ոսկիի գումար մը կուելցնէ եղբւ իր ծախքերէ զատ : Անցեալ տարի այդ աւելցած 1000 ոսկիով արժէթուղթ գնուած է : Երանի՛ Գահիրէցւոց . մարդիկը ստակ ալ կ'աւելցնեն . մինչդեռ խեղճ վաճառքին , ոչ կարուած ունի ոչ հասոյթ և ոչ ալ Եգիպտոսի խոշոր խոշոր հայ փաշաները ու պէյերը , որոնք ի հարկին օգնեն ազգային սնտու- կի բացին որպէսզի եկեղեցւոյ ստացուածքը պարտապահանջներէ ծախուելու վտանգին չ'ենթարկուի :

— Հայրենիքէն ու արտասահ- մանէ Տրապիզոն հասնող բազմա- թիւ հայեր կառավարութենէ ար- գելուելով կ'ապասեն հոն խեղճ ու թշուառ վիճակի մէջ , Տրապիզոնի Առաջ . Տեղապահը Պատրիարքին տեղեկագիր մը ղրկելով այդ խեղ- ճերուն անտանելի վիճակը պար- զած ու անոր դարման խնդրած է : Պատրիարքը այդ տեղեկագիրը Գաղ . Ժողովոյ նկատառութեան յանձնեց է :

— Աղթամարայ Կաթողիկ . Տե- ղապահը եւս հեռագրով Պատրի- արքարանէ նպաստ խնդրած է , յայտնելով թէ դաւանափոխու- թեան որ և է խնդիր մնացած չէ այն կողմեր , բայց նպաստի ստի- պողական պէտք կայ :

Այս խնդրին ալ վանայ այցե- լու հովիւ Տ. Ներսէս Եպիսկոպո- սին յանձնուած է :

— Այս տարի Արմաշ ուխտի գացողներու թիւը 8000ի բարձ- րացած է :

— Պոլսոյ ուսումնական խոր- հուրդը շրջաբերական մը պատ- րաստած է Մամուրեանի յոբել- եանի առթիւ բազմադրու յոբել- եարին նուէր մը ղրկելու նպատա- կաւ . այդ շրջաբերական Պոլսոյ Թաղ . խորհուրդներուն պիտի ղը- կուի , որպէսզի այդ նպատակաւ հանգանակութիւն ընեն . Նոյնը եղած է արգէն Եգիպտոսի մէջ :

— Յառաջիկայ շաբաթ իրիկուն ի նպաստ Տիկին Ֆասուլեանների թատերական ներկայացում մը պի- տի տրուի «Պօրիս» թատերասրա- հին մէջ : Ներկայանալի խաղն է Բարիդոն Ստանկը և երկու զա-ւեշտ :

Օր . Գաթիկա նաեւ պիտի մաս- նակցի այդ իրիկուն , իր մասնա- գիտութիւնը եղող խաղերը ու պա- լերը կատարելու :

Отговорникъ Н. Драгулевъ
Печатница на Хр. Н. Войниковъ